



Գ. Կիրակի Պենտեկոստէն ետք



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ Եւրթեամբ, որ յանձն առիւ մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստոսն Աստուած, եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Զօր եւ Զոգւոյն հետ փրկէ՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳՁ.

Քրիստոս թագաւոր, Զօր եւ Զոգւոյն Էակից, որ մեզի համար մարմնացար սուրբ Կոյսէն, փառքի թագաւոր Քրիստոս, փառք քեզի:

Որ կամաւոր մահով մահը խորտակեցիր եւ անապական յարութեամբդ աշխարհը սորոգեցիր, փառքի թագաւոր Քրիստոս, փառք քեզի:

Որ քու կենարար արիւնովդ լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին, հրեշտակներուն հետ կ'երգենք քեզի ըսելով. փառքի թագաւոր Քրիստոս, փառք քեզի:

ՄԵՍԵՂԻ (64, 2-3)

Աստուա՛ծ իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսե՛ եւ ամէն մարմնաւոր Էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

ՄԱՅ ԵՒ ԿԵԱՆՔ ԶՐԻՍՏՈՍԻ ՅԵՏ


Առաքելներուն Գործերէն (Յռ 6, 12-23)

Թո՛ղ մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմինին վրայ, ձեզ հնազանդեցընելու համար անոր ցանկութիւններուն: Մի՛ թողուք որ ձեր մարմինին անդամներն ըլլան զէնք անհրաւութեան, ի սպաս մեղքին, այլ իբրեւ ողջ Էակներ, կեանքի կանչուած մեռելներու մէջէն, ծառայեցէք Աստուծոյ ձեր մարմինին անդամներով՝ իբրեւ զէնք արդարութեան: Որովհետեւ մեղքը ա՛լ չի տիրեր ձեր վրայ, քանի որ Օրէնքի տակ չէք, այլ՝ Շնորհքի:

Ուրեմն պիտի մեղանչե՞նք, որովհետեւ այլեւս օրէնքի տակ չենք, այլ՝ շնորհքի. քա՛ւ լիցի: Չէ՞ք գիտեր թէ դուք ձեզ պատրաստելով մէկու մը ծառայութեան անոր հնազանդելու համար, կը դառնաք ծառաներ անոր, որուն կը հնազանդիք: Եթէ մեղքին՝ յանգելու համար մահուան. եթէ հնազանդութեան՝ հասնելու համար արդարութեան:

Բայց գոհութի՛ն Աստուծոյ, դուք, որ ատենօք կը ծառայէք մեղքին, հիմա սրտանց հնազանդեցաք վարդապետութեան, որուն յանձնուեցաք: Մեղքէն ազատագրուած՝ կը ծառայէք արդարութեան:

Մարդկային բառեր կը գործածեմ, յարմարցուած ձեր տկարութեան: Ինչպէս որ երբեմն ձեր մարմինը կը ծառայեցնէիք պղծութեան եւ անօրէնութեան, որ կը տանին ըմբոստութեան՝ Աստուծոյ դէմ, այնպէս ալ հիմա, դրեք զայն ի



սպաս արդարութեան: Ի՞նչ պտուղներ կու տայիք այն ատեն. այսօր կ'ամչնաք անոնցմէ, որովհետեւ անոնց վախճանը մահն է: Իսկ հիմա մեղքէն ազատագրուած ծառաներ Աստուծոյ, կու տաք պտուղներ, որոնք կը տանին սրբութեան եւ որոնք վախճանը՝ յաւիտենական կեանքն է: Մեղքին թռչակը մահն է. իսկ Աստուծոյ շնորհքին պարգեւը՝ յաւիտենական կեանքը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մէջ

Ալեյուհա, Ալեյուհա,

Տե՛ր, քու երկրիդ հանդեպ դուն սեր ցոյց տուիր եւ Յակոբի ազգը գերութենէ վերադարձուցի՛ր:

(Սղմ 84, 2)

Ալեյուհա:

ԱԻԵՏԱՐԱՆ

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ՀԱՍԿԵՐ ԿՐ ՓՐՑՆԵՆ

(Մատթ. 12, 1-8)

Սեր Տերը Յիսուս Զրիստոս, այն ժամանակներուն, շաբաթ օր մը, ցորենի արտերու մէջէն անցաւ: Աշակերտները անօթեցած էին, սկսան հասկեր փրցնել եւ ուտել: Ասիկա տեսնելով՝ Փարիսեցիները ըսին Յիսուսի. «Տե՛ս, ի՞նչ կ'ընեն աշակերտներդ, բան մը, որ արտօնուած չէ Շաբաթ օրով»: Յիսուս պատասխանեց. «Զէ՞ք կարդացած, ի՞նչ ըրաւ Դաւիթ, երբ անօթեցաւ, ինք եւ իր ընկերները: Ինչպէ՛ս մտաւ Աստուծոյ տունը եւ ինչպէ՛ս կերան ընծայման հացը, զոր ո՛չ ինք

եւ ո՛չ իր ընկերները ուտելու իրաւունք ունէին, այլ՝ միայն քահանաները: Եւ կամ Օրէնքի մէջ չէ՞ք կարդացած որ շաբաթ օրը, Տաճարին մէջ, քահանաները շաբաթը կը պղծեն եւ անմեղ են: Կ'ըսեմ ձեզի, հոս Տաճարէն աւելի մեծը կայ:

Եթէ հասկցած ըլլայիք, թէ ի՞նչ կը նշանակէ **Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ**, չէիք դատապարտեր այս մարդիկը, որոնք յանցաւոր չեն: Մարդու Որդին տերն է նաեւ շաբաթ օրուան»:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Ողորմութիւն կ'ուզե ան, եւ ոչ զոհ (Մատթեոս 12, 1-8)

Յիսուսի եւ կրօնական իշխանութիւններուն՝ քահանայապետներուն, ծերերուն եւ դպիրներուն միջեւ, շարունակ վեճեր կային կրօնական պարտականութիւններու մասին, ծոմապահութեան, մաքրութեան, շաբաթապահի եւ այլ նիւթերու շուրջ:

Այսօր ալ, քրիստոնէական եկեղեցական ամենօրեայ կեանքին մէջ կան շատ վեճեր եւ պայքարներ:

Չկայ հանգիստ կեանք մը, խաղաղ ծովու նման: Աճումը եւ հասունութիւնն իսկ պայքար կը պահանջեն յարաբերութիւններու մէջ եւ դժուարութիւններու դեմ: Ցաւով կը ծնինք: Կեանքին պայքարները կեանքին մաս կազմող իրականութիւններ են:

Այսօրուան Աւետարանը Յիսուսի վարուելակերպին ընդմէջէն մեր կեանքի պայքարներն ու վեճերը դիմագրա-

ւելու լաւագոյն աստուածային ոճը ցոյց կու տայ: Ան չի պարտադրեր ինքզինք որպէս իրաւունքի տէր մը, իր կարծիքը յաղթականօրէն ներկայացնող կամ ստիպող մը: Ան վեճը կը դիմադրէ ոճով մը, որ կարծէք առաջարկ մը ըլլար: Յիսուսի մտքին մէջ այնքան յստակ է Աստուծոյ ողորմած Յոգին: Ան կը տեսնէ թէ իր խօսակիցները յաճախ Աստուծոյ մասին անվաւեր, պակասաւոր կամ շեղած պատկեր մը կազմած են իրենց մտքին մէջ: Ասոր համար Յիսուս միշտ կը փորձէ օրէնքէն եւ պարտականութիւններէն վեր գերադասել Աստուծոյ Ողորմութիւնը, որ աստուածային տրամաբանութեան ողնաշարն է: Ան օրէնքն եւ կրօնական պարտականութիւնները չի ջնջեր, որովհետեւ ան չէ եկած օրէնքն ու մարգարեութիւնները ջնջելու, այլ գա-

նոնք կատարելագործելու, ճիշտ ընթացքին մեջ դնելու եւ առաջարկելու այնպիսի ասրելակերպ, որուն հիմնական նպատակն ըլլայ սերը՝ օրինաւոր, կարգաւոր եւ մարգարեաշունչ:


Ահա տեսարանը: Առաքեալները աւօթի էին: Հասկեր փրցուցին եւ կերան: Շաբաթ էր: Փարիսեցիներուն համար վեճի նիւթ եղաւ թէ ինչպէս Յիսուսի ընկերացողները Շաբաթի օրէնքին դէմ, ուստի եւ Սուրբ Գիրքին դէմ կը գործեն, յատկապէս Ելքի գիրքին դէմ (20, 8-11): Յիսուս չի փախչիր ճակատումէն, ուստի եւ պայքարէն: Ան կը մեջբերէ երեք հատուածներ Հին Կտակարանէն: Տեսնենք:

Առաջինը՝ պատմական գիրքէ մըն է, Դաւիթի մասին (1 Սամուէլ 21, 2-7): Երկրորդը՝ Օրէնքի գիրքէ մըն է (Թիւք 28, 9-10), տաճարի քահանաներու պաշտօնին վերաբերեալ:

Իսկ երրորդը՝ Ովպէի մարգարեական գիրքէն «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ» խօսքն է (Ովպէ 6, 6):

Յիսուս այս մարգարեական խօսքը կ'իւրացնէ եւ այսօր կ'առաջարկէ նաեւ մեզի: Ողորմութիւն ուզել Յիսուսի կողմէն յստակ խնդրանքն էր, եւ է այսօր: Ըստ Աստուծոյ խօսքին, ողորմութիւն կը նշանակէ մօտ ըլլալ տառապողին: Ասկա է որ Յիսուս «կ'ուզէ» բոլոր անոնցմէ, որոնք իրեն կը հետեւին եւ հետը կ'ուզեն ըլլալ: Այնքան մօտ ըլլալ տառապողին, որ - ինչպէս ուրիշ տեղ մը ան կը բացատրէ - մինչեւ իսկ եթէ հարկ ըլլայ, խոնարհիլ եւ ուսերուն վրայ առնել տառապեալը (տես բարի սամարացիին առակը): Իսկ զոհ ըսածը կը նշանակէր նուիրումն Աստուծոյ՝ այն բանին կամ նիւթին, որ ինքն իր մեջ սուրբ չէր, սակայն արարողութեամբ եւ ծիսակատարումով կը «մաքրուէր», կը «սրբուէր» եւ որպէս նուէր կ'ընծայուէր Աստուծոյ:

Այս տրամաբանութեամբ է, որ Յիսուս գերադասելով Ողորմութիւնը,



կը փորձէ համոզել իր խօսակիցները, թէ օրէնքն ու զոհերու նուիրումը շատ լաւ իրենց տեղերն ունին, սակայն զանոնք կատարելագործողը գործնական սերն է, որ կը թարգմանուի ողորմութեամբ:

Յիսուսի առաջարկը եւ ուսուցումն այս է: Աստուծոյ հաճելի զոհը այն կեանքն է, որուն սիրտն ու միտքը ամբողջութեամբ տրամադրուած է իր քոյրերուն եւ եղբայրներուն, օգնելու համար անոնց, մանաւանդ դժուարութիւններէն եւ դժուար կամ տառապալի կացութիւնէն դուրս ելլելու համար: Այսպէս, ըստ Յիսուսի ոճին, շատ մը յանցաւոր կարծուածներ անմեղ են երբ աստուածային ողորմութեան լոյսին առջեւ ելլեն: